



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՇԱԽՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԸ


նձնանունը այն գլխավոր միջոցներից մնկն է, որով համայնքը կամ հասարակությունը զանագանում է իր անդամներից այս կամ այն անհատին՝ մյուս անհատներից: Այդ միջոցը ավելի է բնորոշվում կամ զարգանում, եթե անձնանվան վրա ավելանում է մի մականոն, կամ հայրանունը, կամ աղքանունը և կամ այդ բոլորը միասին: Կարող ենք ասել պարզապես Վահան, ավելի ճշտած՝ Գայ Վահան, կամ Վահան որդի Հմայակի և կամ Վահան Մամիկոնյան և այլն:

Մարդկային հասարակության մեջ չկա թեկուզ ամենավայրենի մի ցեղ, որի անդամները անձնանուն չունենան: Անձնանունը համաշխարհային մի երեսով է:

Շատերը կարծում են և կամ այնպես են հավատացած, թե անձնանունները ծագում չունեն, այսինքն աննշանակ ձայներ են, և կամ ավելի գիտական ձևով արտահայտվելով՝ արմատական բառեր են: Այս կարծիքը առաջացել է նրանց մեջ հասարակ անունների համեմատությամբ: Ինչպես որ՝ սեղան, զուր, արև, փայտ, ծառ բառերը արմատ են և մենք միջոց չունենք վերածելու նրանք իրենց մասերին, նույնպես են համարվում նաև անձնանունները՝ Միքայել, Տիգրան, Երվանդ, Թաղենոս, Հովսեփ և այլն:

Այս կարծիքը ճիշտ չէ: Հասարակ անունների մեջ կան և պետք է որ լինեն արմատներ կամ արմատական բառեր, բայց անուն-

ների մեջ չկա արմատական բառ: Բոլոր հատուկ անունները, լինեն նրանք մարդու, թե տեղի (լեռան, ծովի, լճի, գետի, քաղաքի, գյուղի և այլն), կազմված են հասարակությաններից, և մն բարդ կամ ածանց բառեր: Ուզիշ իսոսով՝ ամեն հատուկ անուն մի բառ է, նշանակությամբ օժտված հասարակ անուն:

Մեր հասարակության մեջ այս սխալ կարծիքը առաջացած է հատկապես այն պատճառով, որ մեր ամբողջ շրջապատը լցված լինելով անթիվ անհամար օտար անուններով, որոնց իմաստը անծանոթ է մեզ, ենթադրում վենք, թե անունները առհասարակ անիմաստ ձայներ են:

Թե ի՞նչպես կարելի է իմանալ, թե այսինչ անունը հայկական է թե օտար, պետք է դիմել ստուգաբանության: Եթե մի որևէ անուն մեզ համար և մեր լեզվով որևէ իմաստ տալիս է, ուրեմն հայկական է. իսկ եթե ոչինչ չի նշանակում, ուրեմն օտար է: Այսպես օրինակ՝ Աստվածառու, Խաչառու, Տիրառու, Հրաշյա, Վարդգես, Նորայր, Ժիրայր, Հրայր, Մարգար և այլն հայկական անուններ են, որովհետև հայերեն են և հայերենով մի բան նշանակում են: Աստվածառու, նշանակում է Աստուծո տվածը, Խաչառու՝ խաչի տվածը, Տիրառու՝ Տիրոց տվածը, Հրաշյա՝ հրային աշքեր ունեցող, Վարդգես՝ որի գեսը, այսինքն մազերը վարդի նման են, Նորայրը՝ նոր այր, նոր մարդ է, Ժիրայրը՝ ժիր այր, ժիր մարդ է, Հրայրը՝ հուր այր, այսինքն կրակե մարդ է, Հրանդ՝

հուր է անդ, այնտեղ՝ սրտում կը ակ կա վառված, Մարգար՝ մի մարգար է, ապա- գայի գուշակ և այլն:

Խոկ Պետրոս, Պողոս, Լևոն, Գուրգին, Գրի- գոր, Փիլիպոս, Արքուման, Ռուբեն, Ալա- վերդի, Սենեթերիմ և այլն Հայերնի մեջ ո՛չ մի իմաստ չունեն, հետեւարար Հայկական անում չեն: Նրանք օտար անուններ են և յուրաքանչյուրը պատկանում է այն ազգին, որի լեզվով ստուգարանվում է կամ որից որ առնված է: Պետրոս Հունարեն է և Հունարե- նում Պէտրօս նշանակում է «քար»: — Պո- ղոս լատիներեն է և լատիներեն թասւս կամ բանն նշանակում է «փոքրիկ»: — Լևոն Հունարեն և լատիներեն է, այս երկու լեզվով լ. Յո., Ճշո՞յծ նշանակում է «ար- թուն»: — Գուրգին պատկանում է «ար- թուն»: — Փիլիպոս Հունարեն է, որովհետև ծագում է Հունարեն ֆիլօ «սիրել» և խպառ- ձիս բառերից և նշանակում է «ձիասիր, ձի սիրութ»: — Արքուման պարսկերեն Հատուկ անում է, որովհետև ծագում է պարսկերեն արքումենս «փափառդ», ցանկացող բա- րից: — Ալավերդի տաճկական անուն է, որովհետև ծագում է Ալլահ «Աստված» և վերդի «տվյալ» բառերից: — Ռուբեն երրայե- ցերեն է և երրայեցերեն րաւ հետ նշանա- կում է «առե՛ս, որդի՛»: — Սենեթերիմ ասորհս- տաներեն է և այս լեզվով Տ՛ու շիկ երեւ նշանակում է «Աստված եղբայրներս շա- տացրեց»:

Իգական անունները արականներից այն առավելություն ունեն, որ նրանց մեջ Հայ- կականները համեմատարար ավելի շատ են: Այսպիս օրինակ՝ Հայկական ծագում ունեն Սիրունչ, Մաքրուի, Տիրուի, Թագումի, Սրբունի, Խոկումի, Հասմիկ, Սահիշակ, Վար- դումի, Խունքազ, Մայրանուշ, Համափյուն, Երշանիկ, Արմենուի, Արշալույ, Արենաս, Արեգանակ, Նազենիկ, Վարսենիկ և այլն և այլն: Իգական անունների այս դրական կողմը, սակայն, մի բացասական երկույթի արդյունք է — Հին Հայոց մեջ կնոց անունը տալը ամոնթ էր Համառում, և փոխանակ կնոց իր սեփական անունով կոչելու, ասում էին «այսինչի աղջիկը»: Մրանից են առաջա- ցել Տիգրանուի, Խուրովիդուիս, Սահակա- նուշ, Սմբատուի, Սմբատանուշ և այլն, որոնք ո՛չ թի իրապիս անուն են, ինչպիս օրինակ՝ Կոն Ֆու-ցե, Լի Հունկ-շանկ, Սուն Յան- ցեն և այլն օտար են: Այսպիս է նաև տաճիկների, վրացոց, բրդերի մեջ:

Վում էր Խոսրովիդուիս, որովհետև Մեծն Խոսրովի աղջիկն էր, Սմբատ Բագրատունու երկու աղջիկները կոչվում էին Սմբատանուշ և Սմբատուի: Մինչև այժմ էլ Ղարաբաղի կամ Զանգեզուրի գյուղերում կանայք և օ- րիորդները կոչվում են նույն ձևով: «Բալա- սանի աղջիկ» փոխանակ ասելու Արուայակ և այլն: Երեսովիթը շատ տարբեր չէ եվրոպա- կան երկրների այն սովորությունից, որով ամեն մի օրիորդ իր հոր ազգանունով և ա- մեն մի կին իր ամուսնու ազգանունով է կոչվում, առանց իր ծննդական անվան հի- շատակության: Ֆրանսիացոց մեջ կնոց բուն անունը տալը ամենամեծ անարգանքն է: Այդպիս են կոչվում միայն փողոցային կա- նայք Այս պատճառով է ահա, որ մեր Հին մատենագրությունն էլ Հայկազն ժաման է հոգական անունների վերաբերմամբ: Հայոց պատմության մեջ իգական անուն չկա: Այս բացասական երկույթի դրական արդյունքն այն եղավ, որ երր անցյալ զարի կեսին սկսեց Հայկական ինքնագիտակցության զարթումը, Հայկական իգական անուններ չունենալու պատճառով՝ պատ ասպարեզ բացվեց բառակերտության և սկսեցին հորի- նել ամեն տեսակի իգական նորանոր անուն- ներ:

Հայոց մեջ բուն Հայկական անունների զգալի մասը օտար է: Համարյա նույն դրու- թյան են նաև մեր շրջակա ազգերը. այսպիս, ուսուների մեջ զուա ուսասկան կամ այսպա- կան ծագում ունեցող վսեփոլոդ, Վաղիմիլր, Սվյատովալ, Յարուշալ, Լյուդմիլա և այլ անունների կողքին կան՝ Իվան, Սեր- գեյ, Նիկոլայ, Դիմիտրի, Ալեքսանդր, Պյոտր, Պավել, Սերաֆիմ, Յակով, Խրիստոփոր և այլ օտար անունները: Պարսիկների մեջ բնիկ իրանական անուններ այժմ շատ քիչ են, այսպիս Խուսե, Գուրգեն և այլն, իսկ Անմեդ, Ալի, Հասան, Հյուսեին, Սովեյման, Աբբաս և այլն օտար են: Այսպիս է նաև տաճիկների, վրացոց, բրդերի մեջ:

Այսպիս չեն սակայն արաբները, Հնդիկ- ները, չինացիր, երրայեցիք, չեին նաև Հին Հու- յուները, լատինները և այլն: Արաբական բուլոր անունները՝ Ալի, Օսման, Օմար, Հա- սան, Հյուսեին, Աբբաս և այլն զուտ արա- բական են և արաբերեն լեզվով ունեն իրենց իմաստը. Ալի նշանակում է բարձր, Հասան նշանակում է գեղեցիկ, Հյուսեին՝ սիրունիկ և այլն: Հնդիկների բուլոր անունները Հնդիկ- ներն են և նրանց մեջ օտար անուն չկա: Զի- նական անունները միշտ եռավանկ են, ինչ- պիս օրինակ՝ Կոն Ֆու-ցե, Լի Հունկ-շանկ, Սուն Յան- ցեն Յան-ցեն և այլն. Արանց մեջ առաջին վանկը ազգանունն է, մյուս երկուաը անուն և Հայրանուն:

Սեփական կամ օտար անուններ ունենալու երևությունը կապված է սեփական կրոն ունենալու փաստի հետ: Երբայցին ունի իր սեփական կրոնը, որ է Մովսիսականությունը և պահում է իր սեփական անունները՝ Մովսիս, Արքանակ, Խալիք, Սողոմոն և այլն: Արքը ունի իր սեփական կրոնը, որ է մահմեդականություն և պահում է իր արքական անունները: Հնդիկը, շնացին ունեն իրենց սեփական կրոնները՝ բրահմանականություն, բուդդայականություն, կոնֆուցեականություն, լաոցեականություն և այլն, ուստի և պահում են իրենց սեփական անունները: Խակ այն ազգերը, որոնք ընդունել են մի ուրիշ ժողովրդի կրոնը, ընդունել են նաև նրանց անունները: Տաճիկները, քրդերը, աֆղանները ընդունել են մահմեդականությունը, որ արաբների կրոնն է, ուստի սեփական անուն չունեն: Նրանց անունները բոլոր արաբներն են: Պարսիկները, հինգամանակ, երբ հետևում էին իրենց սեփական զրաքաջտական կամ մազեղզական կրոնին, ունենին զուտ պարսկական (իրանական) անուններ, խակ այն օրից, երբ ընդունեցին մահմեդական կրոնը, և մինչև այժմ, դործ են ածում միայն արաբական անունները: Այս կողմից հետաքրքիր օրինակ են տալիս փարսիկները, այն է՝ Պարսկաստանի և Հնդկաստանի արդի կրակապաշտ պարսիկները, որ մինչև այսօր պահում են անաղարտ չին պարսկական (իրանական) անունները:

Եվրոպան հնապես երկու բաժին ուներ. Հյուսիսը և արևելքը բարբարոս էին, իսկ Հարավը և արևմտաքը բռնում էին Հույներն ու Հումեացիք, որոնք շատ հին և շատ առաջադիմ մշակույթ էին ստեղծել: Այս երկուան էլ ունեն իրենց սեփական անունները, հուկները զուտ հունարեն և հումայիցիք զուտ լատիներեն: Մեզանից 1900 տարի առաջ, այս երկու աշխարհներում սկսեց քարոզվել քրիստոնեությունը, որ վերջապես ընդհանուր կրոն դարձավ ու տիրապետեց ամբողջ Եվրոպայում և Ասիայի արևմտյան մասում, Խսափիայից մինչև Հայաստանի արևելյան սահմանը:

Երբ հուները և լատինները ընդունեցին քրիստոնեությունը, Ավետարանի հետ պիտի ընդունեին նաև Հին Կոտակարանը, որ քրիստոնեության պատվանդանն էր կադմում և Զրեաների սրբազն մատյանն էր: Այս պատճառավ էլ Հրեական այն անունները, որոնք սովորական էին Հին Հուն Կոտակարանի մեջ, գործածական դարձան նաև հույների և լատինների մեջ: Բայց հուները և լատինները պահանջում էին կամ շուտ են մոռացվել: Առաջինի շափ երկար է Աստվածառու, որ թեև շատ սովորական անուն է, սակայն ոչ մի տեղ չի պահպատ իր բռն ձեռվ, այլ զանազան կրծատումներով դարձել է՝ Աստառ, Աստուր, Աստիկ, Ասօ, Շատուր, Սատիլի: Առաջարարակ սիրելի են երկավանկ անունները. Երկուացից ավելի վանկ ունեցող անունները կրծատվում են: Արա համար է, որ Մարտիրոսը դառնում է Մարտօ, Մրտօ, Մարտիկ— Մկրտիչը դառնում է Մկրտ, Մկօ,

Հրաժարվել այս բոլորից, և նորի հետ պահանջին նաև հինգ: Այսպիսով քրիստոնեության մեջ ընդունվեցին մի կողմից Հրեական (երրայական) և մյուս կողմից Հունական և լատինական անունները: Եվ այն բոլոր ազգերը (Հայ, Վրացի, ռուս, գերմանացի, հունգարացի, անգլիացի և այլն), որոնք ընդունեցին Հունա-լատինական քրիստոնեությունը, ընդունեցին նաև Հրեական, Հունական և լատինական անունները: Ուր որ կային հին կյանքին սեփական անուններ, մեծագույն շափով ջնջվեցին՝ իբրև կռապաշտության մնացորդ, տեղի տալով նոր կրոնի՝ քրիստոնեության բրած հույն-լատին և երրայական անուններին:

Այժմ մասնավորենք մեր խոսքը հայոց դորժածած անունների մասին:

Ո՞չ մի բան այնքան հավատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի գանգան ելեկչները, մեր կրած ազգեցությունները օտար ժողովուրդներից, ինչպես և մեր ներքին ձգտումները, որշափ հասուկ անունները:

Մենք գիտենք, որ հատուկ անունները երկու տեսակ են՝ տեղանուններ և անձնանուններ: Տեղանունները ավելի հարատե, հաստատում և տևական բնույթ ունեն քան անձնանունները: Որևէ լեռ, լիճ, ծով ու գետ մշտնչենական կյանք ունի. որևէ քաղաք կամ գյուղ հարյուրավոր ու հազարավոր տարիների կյանք ունի. հետևաբար և նրանց անունը ընդհանրապես մնայուն և տեսական է: Բայց անձերի կյանքը առ առավելն մի դարի եւեղություն ունի: Անցնում է սերունդը, փոխվում են գաղափարները, փոխվում են ազգեցությունները և անուններն էլ նրանց հետ միասին անհետանում են, տեղի տալով նորանոր ձեռքի:

Անձնանունների տեսականությունը որոշ չափով կախված է մի քանի հանգամանքներից, որոնք են.

1. Բարի կարենույունը.— Չափազանց երկար անունները շուտ են մոռացվում կամ դոնք այնքան են կրծատվում, որ այլևս անձնաշելի են դառնում: — Արելինագով, Ազարանգենոս իրենց երկարության պատճառով հաջողություն չեն գտել կամ շուտ են մոռացվել: Առաջինի շափ երկար է Աստվածառու, որ թեև շատ սովորական անուն է, սակայն ոչ մի տեղ չի պահպատ իր բռն ձեռվ, այլ զանազան կրծատումներով դարձել է՝ Աստառ, Աստուր, Աստիկ, Ասօ, Շատուր, Սատիլի: Առաջարարակ սիրելի են երկավանկ անունները. Երկուացից ավելի վանկ ունեցող անունները կրծատվում են: Արա համար է, որ Մարտիրոսը դառնում է Մարտօ, Մրտօ, Մարտիկ— Մկրտիչը դառնում է Մկրտ, Մկօ,

Միկիտ, Միկիչ, Մուկուշ.— Հոխիսիմեն դառնում է Հոռոփ, Հոռոմ, Հուտի.— Եղիսա-սերը դառնում է Եղիս, Ելսա, Ելսօ, Սա-բիր, իսկ եվրոպական լեզուների մեջ էլ՝ Ելիզ, Ելիզա, Ելզա, Ելզարելլա, Զարել, Բելա և այլն:

2. Բառի ներդաշնակուրյունը.— Ցուրա-րանցուր ապդի և ժողովրդի գեղարվեստա-կան հաշակի համարված՝ իմաւուր և տգե-ղածայն համարված անունները ընականա-րար շուտով ջնջում են, իսկ ախորժելի նշուն ունեցող անունները միշտ ավելի են ֆնտրվում:

3. Նշանակուրյան գեղեցկուրյունը.— Ան-իմաստ կամ տգեղ համարված մի անուն ավելի շուտ է հնանում և քաշվում ասպարե-դից, բան թի նշանակությամբ գեղեցիկ մի անուն։ Վարդուի շատ հին անուն է, գո-յություն ուներ 5-րդ դարում, հիշվում է Հայումավուրքի մեջ և գեղ երկար պիտի ապրի Այսպես նաև Շուշան կամ Շուշանիկ։ Խոշնչափ ախորժելի են Մանիշակ, Սիրա-նուշ, Հրանուշ, Վարսենիկ և այլն, մինչդեռ Ազապի, Եվգրասիա, Հեղինե, Կատարինե ժոռացված ու անհնտացող անուններ են տրդեն։

4. Այն Հանգամանքը, որ պատահարար այն անունը կրող անձինք եղել են նշանա-վոր և անմոռանալի մարդիկ, պատճառ է դարձել, որ այն անունները երկար ապրեն։ Այսպիս Արքար, Վարդան, Հայկ, Ներսես, Սահմակ, Մերոպ անմոռանալի անուններ են, որովհետեւ մեր պատճության մեջ ունեցել

ենք այս անուններով կոչված նշանավոր անձնավորություններ։ իսկ Վասակ, Հուպա, Մերուժան մեռած, անգործածելի անուններ են, որովհետեւ այս անուններով գտնված են նշանավոր մատնիչներ և զավաճաններ։ Ա-նունը ինքնին այստեղ նշանակություն չունի։ Վասակ բար իրապես ավելի գեղեցիկ է բան Վարդան, բայց ուրացող Վասակի վատ հիշատակը մոռացնել է տվել այդ անվան գեղեցիկությունն ու ներդաշնակությունը։

5. Կրոնական կամ ազգային զաղափար-ները.— Մրանք ժամանակի բերմունքի հա-մեմատ են, կար ժամանակ՝ երբ կրոնական զգացմունքը կյանքի գլխավոր վարիչն էր։ այն ժամանակի անունները ավելի կրոնական էին, ինչպես Աստվածառու, Թոռու, Կիրա-կու, Մարկոս, Պուլկոս, Մատթեոս, Պետրոս, Պողոս և այլն։ Կրոնական զգացմունքը ան-ցավ զնաց՝ և տեղի տվեց զուտ ազգային շրջանին։ Դա էր անցյալ դարի կեսին։ Այն ժամանակի կրոնական անունները այլևս ա-նախորժ դարձան և նրանց տեղ սկսեցին հայ ազգային անունները— Վարդան, Եր-ժանդի, Զարենի, Գուրզեն, Արտաշես, Հրաշյա, Զարմայր, Պարույր և այլն։

Եթե ուզենանք հայ անձնանունները դա-սպարել իրենց ուրույն խմբերով և ներկա-յացնել այն ազգեցությունները, որոնց են-թարկված են նրանք մեր հնագույն շրջանից սկսած մինչև այսօր, կտևանենք, որ նրանք կազմում են 15 խումբ, որ համապատաս-խանում են 15 շրջանի, որոնք հետեւյաններն են՝ ժամանակադրական կարգով։

1. ՆԱԽԱՀԱՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Նախահայկական անունները պատկանում են այն ժողովրդին, որ գրավում էր Հայաս-տանը։ Հայոց իրավուն անշուշտ շատ բան վերցրեց նրանցից, այս կարգին են պատ-կանում մեր տեղանունները։ Գրելին ստույգ է, որ Հայաստանի տեղանունները ամենաշ-մեծ մասամբ նախահայկական (իսպայան) փոխառություններ են, ինչպիս Արշատ, Վան, Արմեց, Մուշ, Կարին, Մասիս և այլն և այլն, որոնք հայերենով չեն կարող մենքնիւ ամեննիւն։ Քիչ առաջ բերված պատ-չառարանությամբ՝ շատ ավելի սակավաթիվ

են անձնանունները։ Մրանց մեջ կարող ենք հիշել Արամ և Մանավազ, Առաջինը ան-շուշտ ծագում է Խալդյան Արամե նշանավոր թագավորի անունից։ Երկրորդը շատ նման է նշուն Մենավա արքայական անվան, բայց դա պատահական է և Մանավազ իրանական անուն է։ Մի կողմ ենք թողնում այն բազ-մաթիւ անսուուղ ձևերը, մասնավորպես հախարարական տոմանանունները, որոնք դանաշան հեղինակների կարծիքով՝ ծագում են նախահայկական խալդյան անուններից։

2. ԱՆԹԱՆԱԲ ԱՆՈՒՆՆԵՐ

Խորհնացին իր Պատճության Ա. պրոբառ առաջին է մեզ հայ անունների մեջ խոսմբ, որոնց ծագումը բոլորովին անհայտ է։ Այս կարգին են պատկանում Հայկ, Արմենակ, Արմայիս, Ամասիա, Համբար, Արտամ, Արտ, Կար-

դոս և այլն և այլն, որոնք ապահովակեօ Հայերեն չեն, բանի որ չեն կարող մեկնմել Հայերենով։ Թե արդյոք սրանք էլ պատկա-նում են խալդյան շրջանին և կամ Հաթյան անունների մնացո՞րդ են և կամ փոյտու-

կան որևէ լեզվից են փոխ առնված և կամ թե վերջապես Խորենացու հնարածներն են են (գոյն մի քանիսը), կարելի չէ գիտության այժմյան վիճակում ստուգապես որոշել: Ստույգ է ինձ համար, որ Մուշեղ, հայոց

պատմության մեջ այնպես սովորական մի անոն, փոխ է առնված հաթյան Մուրշիլի անոնից: Այս անոնով են կոչվում հաթյան մի քանի թագավորներ (տե՛ս իմ Հայոց լեզվի պատմություն, Ա Հատոր էջ 149):

3. ԹՈՒԽ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Թուխ հայկական անունների առաջին շըրքն ընկնում է Արշակունյաց ժամանակ: Ակաբանգեղոս, Բուզանդ, Կորյուն, Խորենացի, Փարացի և Եղիշե ավանդում են մեղայս կարգի բազմաթիվ անուններ, որոնք կրկնվում են նաև հաջորդ պատմիչների մոտ: Այս անունները զուտ հայկական են, որովհետև մեկնվում են հայերեն լեզվով: Ինչպես Արծան, Տիրայր, Այրուկ, Աստղիկ, Գյուտ, Թարիկ, Թարուկ, Թոռնիկ, Խշան, Եղբայր, Երանյակ, Զարմայր, Բազուկ, Գոռուկ, Առնակ և այլն: Թուխ հայկական անունների մեջ շատ սովորական են կենդանիների և թռչունների անունները, ինչպես Առյուծ, Այծենինիկ, Կորյուն, Արտովյան, Գառնիկ, Եղբիկ, Ցիլիկ, Ցեղուկ, Մրջյուելիկ և այլն:

Թուխ հայկական անունները, ինչպես ասացինք, պատկանում են Արշակունյաց շըրք:

նին, ավելի որոշ խոսելով՝ նախաքրիստոնեական հայության: Քրիստոնեությունից հետո սրբագր սկսում են կամաց-կամաց տեղի տալ. Մեծ Անիշխանության կեսից հետո, արարական տիրապետության և Բագրատունյաց թագավորության ժամանակ շափականց սակավաթիվ են դառնում և Ծուբինյանց ժամանակ բոլորովին անհետանում են: 19-րդ դարի կեսից հետո, երբ սկսեց հայկական զարթնումը, բուն հայկական անունները նորից կենդանացան և նրանցից լավագույնները, այսինքն իմաստով գեղեցիկները, պատմության էջերից գորս բերվելով, նորից գործածկել սկսեցին, ոմանք կրոնական, ոմանք էլ աշխարհական շրջանակներում, ինչպես Տիրայր, Կորյուն, Եղբիկ, Գառնիկ, Զարմայր, Երանյակ, Խշան, բայց ոչ Մրջյունիկ, Ցիլիկ. Արտույտ և այլն:

4. ՊԱՀԼԱՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Պարթևական ազդեցությունը հայոց վրա շափականց մեծ է, Պահլավերենը հայ ազնօգականության լեզուն էր: պալատականները և նախարարները այդ լեզվով էին խոսում, դիվանական հարաբերությունները այդ լեզվով էին կատարվում: Զարմանալի շպիտի թվականը, եթե ասենք, թե չին հայոց անունների որոշ մասը, որոնք մենք զուտ ազգային անուններ ենք համարում, պարզապես պահլավական փոխառություններ են: այսպես օրինակ Վարդան, Վահան, Բագարատ, Ատրեներսի, Դրաստամատ, Զարեն, Սեպում, Զոհրապ, Խոսրով, Խոսրովիդովս, Համազապ, Արտաշես, Գիսակ, Գուրգեն,

Անուշ, Աշխեն, Առաստում, Արշակ, Սահատրուկ, Արտավազի, Տրդատ, Կումշապուն և այլն և այլն:

Պահլավսկան անուններն էլ իրանյան տիրապետության անկումից հետո սկսեցին մոռացվել: Ծուբինյանց իշխանության ժամանակ ամենամեծ մասամբ զնշված են արդեն. մնում են միայն նրանք, որ ներկայացնում են մեր պատմության ամենամեծ դեմքերը, ինչպես Վահան, Վարդան, Տրդատ և այլն: Հայկական զարթնումին նորից կենդանացան նրանք և այսօրվա հայության ամենասիրելի անուններն են:

5. ԱՍՈՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Քրիստոնեությունը ընդունելուց հետո, հայերը առաջին անգամ ընկան ասորական ազդեցության տակ: Հոմանատանը հեռու էր, իսկ Միջագետքը շատ մոտիկ: Բազմաթիվ ասորի քարոզիչներ կային մեր երկրում, որ նրանք իրենց լիզուն տարածում էին եկեղեցու քարոզիչը: Եկեղեցական պաշտամունքի լեզուն ասորերեն էր. Ավետարանը ասորերեն

էր կարդացվում: Հայ երիտասարդները իրենց ուսումը Եղեսիայի դպրոցումն էին ստանում. Աստվածաշունչը առաջին անգամ ասորերենից թարգմանվեց: Այս ժամանակաշրջանում, մեր մեջ մտան մի խումբ ասորերեն անուններ, ինչպես Արշամ, Արգար, Եղիշե, Գաղիջո, Բարգամար և այլն: Ասորական ազդեցությունը կարճատե եղավ.

շուտով վրա հասան հումական և հետո զուտ հայկական քաղաքակրթությունը, որոնք իւեղեցին ասորականը: Ասորական անուններն էլ ջնջվեցին և նրանցից հաղիվ մեկերկուսը կլանք ունեն այսօր. այն է Աբգար

և Եղիշե, որոնք ապրում են շնորհիվ այն հանգամանքի, որ ներկայացնում են մեր առաջին քրիստոնյա թագավորի (ըստ ավանդության) և մեր ամենից սիրելի բանաստեղծ պատմագրի անունը:

6. ԵՐԲԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Երբայական քաղաքակրթությունից խորապես աղդված աղքերի մեջ զոտվում ենք նաև մենք: Ճշմարիտ է, թե այս աղքեցությունը անմիջական հարաբերությանց արդյունք չէ և հույների միջոցով հասել է մեզ, բայց այնքան սաստիկ է եղել այն, որ շատ տարբեր ձև չպիտի ունենար, եթե անմիջական հարաբերության ծնունդը լիներ: Քրիստոնեության և Աստվածաշնչի միջոցով երբայցից բներից անցել է մեզ անձնանունների մի մեծ թիվ, որ 1600 տարուց ի վեր մեր ամբողջ կյանքն է լցնում: Աղամ, Եվա, Սրբ, Արքանամ, Սեր, Սահակ, Գանիել, Գարեհել, Գավիլը, Խայի, Հակոբ, Գաբարիա, Սողոմոն և այլն և այլն հայ ժողովրդի բոլոր խավերի համար այնպես ծանոթ, այնշափ սովորական, այնքան հայացած և այն աստիճան ընտանի

անուններ են, որ դեռ դարեր ու դարեր պիտի ապրեն. և հազիվ թե կարելի լինի ասել, որ երբեցից պիտի կարենան ջնջվել հայության և աշխարհի միջից:

Երբայական անունները անցել են մեզ Աստվածաշնչի թարգմանության միջոցով, և որովհետև մեր Աստվածաշնչը թարգմանված է հունարենից և ո՞չ թե ուղղակի երբայցերենից, ուստի այս անուններն էլ կրում են հունական կնիքը: Այստեղ ամենացայտուն կետը հունարեն է— հունարեն լեզվի մեջ վկա շ ձայնը, ուստի ուր որ երբայցերենը ունի շ, հույնը զնում է ս: Մենք էլ, թե ունենք շ ձայնը, բայց հետևելով հունարենի զնում ենք ս: Այսպես օրինակ՝ երբայցիցին ասում է Երոշին, իսկ մենք ասում ենք Երուսաղեմ: Այս երեսությը ընդհանուր է բոլոր Եվրոպական աղքերին:

7. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հույնը քրիստոնեության տարածիլ և համաշխարհային քաղաքակրթության դաշտան է եղած. շկա աշխարհիս մեջ մի աղդ, որ հունական քաղաքակրթության որևէ բանով պարտական չլինի: Զինացիք անգամ հունարենից փոխառաւ քառեր ունեն: Առանձնապես մեր աղդը ամենամեծ շափով աղդված է հույներից: Եթե մեր նախարիստունեական քաղաքակրթությունն ամբողջապես պարթիվական քաղաքակրթությունն էր, մեր հետքին հունական է: Մեր գրականությունը հունականի ընդօրինակությունն է. մեր առաջին զրքերը հույն հեղինակներից են թարգմանված. և այս բանը շարունակվել է մինչև Ռու-

բինյանց թագավորությունը. Աստվածաշնչը Ավետարան, Մաշտոց, Վարք Արքոց, Հայոմագուրը, Խորհրդատետը՝ հունարենից են թարգմանված կամ հունականի օրինակով Խմբագրված:

Այսպիսի խոչոր աղդեցության բնական արդյունքն է նաև հատուկ անունների մի առատ թիվ, որ 4-րդ դարից սկսած մինչև այսօր տիբապետում է հայ կյանքի վրա. օրինակ՝ Անաստաս (Հարություն), Պետր (Երկրագործ), Վրիզոր (արթուն), Թեոդորոս (աստվածատոր), Փիլիպոս (ձի սիրող), Կիրակոս (տերունի), Հոփիսիմ (անկյալ), Ազապի (սեր), Ստեփան (պսակ) և այլն:

8. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Վերեւում ցույց տվեցինք, թե անձնանունները առջասարակ կրոնական բնույթ ունեն և բատ այնմ կրոնակից աղքերից առնվելով նրանց կրոնի հետ էլ տարածվել են:

Ի նկատի ունենալով այս տիեզերական երևոյթը, տարօրինակ է անշուշտ այն հանգամանքը, որ հայերը, նույնիսկ քրիստոնեության ամենից պայծառ տարիներում, ընդու

նել են կրոնապես իրենց թշնամի ազգերի անձնանունները, ինչպես արաբների և թյուրքների: Զգիտամ թե ի՞նչպես պետք է մեկնել այս երևույթը: Անշուշտ մահմեղականները շատիպեցին մեզ, որ մենք բռնի կերպով ընդունենք իրենց անունները: Երկի այս էլ գերիշխան տարրի բնական ազգեցության արդյունքն է, ազգեցություն՝ որ ամեն ձեմ ու

ամեն հանգամանքի մեջ էլ իր գործը տեսնում է, և փոքր, նվաճված ազգերը իրեն է քաշում, իրեն է միացնում:

Մեր հին պատմության մեջ ծանոթ արաբական անուններ են Աբլիսարիպ, Արուսանի, Համամ, Մլեն և այլն, Ոմանք նաև գործածված են Հայ թարգմանությամբ, ինչպես Ճննդուկ, որ արաբական Համամ համանիշի թարգմանությունն է:

9. ՀԱՏԽԱԿԱՆ ԱՆՌԻՒՆԵՐ

Իուքինյանց օրով, հարաբերությանց աճման հետ, շատացավ նաև լատինական անունների գործածությունը, ինչպես Անտոն, Լուս, Զաքրի, Ալիս, Հերում, Օգոստինոս և

այլն: Ոուքինյանց պետության անկումով լատին անունները ջնջվեցին և այսօր հազիվ մի քանիսը կենդանի են նրանցից:

10. ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆՌԻՒՆԵՐ

Քրիստոնեության տարածումից հետո, երարարական և հունական անունների հեղեղման ժամանակ, ծագեց հայոց մեջ մի նոր միտք, այն է՝ թարգմանել օտար քրիստոնեական անունները: Հունական Անաստաս անվան դեմ դրին Հարուրյուն, Ապոստոլի դեմ՝ Առաքել, Թեոդորոսի դեմ՝ Աստվածառու, Սատարիի դեմ՝ Խաչիկ, երրայական Սերի դեմ՝ Մխիթար և այլն: Այս երևույթը անշուշտ հումագետ հայրերի գործն էր և ազգային սահմանական դրսություն մի ձեռնարկ հայոց մեջ: Ուշադրություն շեն դարձրել նրանք այն հանգամանքի վրա, թե արդյոք այդ թարգմանված անունների բնաձևը իրապես գործածական է հայոց մեջ, թե ոչ: Օրինակի համար՝ Անաստաս, Թեոդորոս և այլն հայոց ժանոթ անուններ են եղած, բայց Ապոստոլ,

Ստավրի և այլն գործածական շեն եղած մեր մեջ: Թարգմանության հետ զուգընթացարար մտել են նաև նոր նմանակերտ անուններ, բոլորն էլ քրիստոնեական կյանքի բացատրություններ, Հայ ժողովրդի մտքին ու սըրտին մոտեկ ու հասկանալի բառեր, որով մեր անձնանունների բառարանը կրկնապես ընդարձակվել է: Այսպես են Համբարձում, Զատիկ, Գալուստ, Մարգար, Տիրատուր, Խաչեր, Սերոն, Կարապետ, Մկրտիչ, Ավետիս, Ավագ, Մաքրունի, Սրբունի, Տիրունի և այլն և այլն, որոնք, սկսած այն օրից մինչև այժմ, ավելի կամ նվազ շափով գործածական են մեր մեջ: Մեր մտավոր զարգացման պատմության տեսակետով շատ հետաքրքիր էր որոշել, թե ե՞րբ է այս անունների ծագման ժամանակը:

11. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆՌԻՒՆԵՐ

Հայ կրոնական անուններից գուրս կան բազմաթիվ ուրիշ անուններ, որոնք թեև հայերենի մեջ կազմված անուններ են, բայց քրիստոնեական հավատալիքների շուրջը շեն պտտվում, այլ իրենց իմաստով ներկայացնում են ավելի իրական կյանքը և շատ անզամ ներկայացնում են աշխարհիկ բանաստեղծական սիրուն պատկերներ: Օրինակ՝ Թովմածամ— մազերը սև, Շաղոսկի— որսկի է շաղում, Վարդիքեր— վարդի թերթ,

Հերիքնազ— հերիք ինչքան նազ ես անում: Այս շարքի անուններից են՝ Զանազան, Վարդերես, Լուսպարոն, Նորարե, Վարդըմպու, Անձրելվարդ, Նորվարդ, Նորտիկին, Վարդմանուկ, Քեարիկ և այլն:

Հայ հասարակ ժողովրդի, շինականի բնիկ, հարազատ, յուրակերտ անուններն են սրանք, որ եկեղեցական դասի պաշտած կրոնական անունների և ազնվական դասակարգի սիրած օտար անունների շրջանակում բացառիկ փայլով ցոլում են:

12. ԱՅԼՋՈՒԿ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդական անուններին գրեթե ժամանակակից են այն բազմաթիվ անձնանունները, որ հայ ժողովուրդը փոխէ և առել թաթար, սելջուկ և նորապարսիկ մահմեդական ազգերից։ Հայ ժողովուրդը ընդհանրապես շատ լավ գիտեր այդ լեզուները, որով շատ դյուրավ թափանցում էր անձնանունների նկարին իմաստին և նրանց մեջ տեսած գեղեցիկ պատկերներից հրապուրված՝ վերցնում ու որդեգրում էր նրանք։ Օրինակ՝

Ասլան — առյուծ, Զիվանշիր — ժատաղ առյուծ, Բահալու — թանկագին, Բայրաֆ — զրոշակ, Գոլլահաւը — գարնանային վարդ, Գոլլդաստա — վարդի փունչ, Գոլմելիք — վարդերի թագուհի, Գոլմիզար — վարդանկար, Համբանդա — ծառա Աստուծո, Հախնազար — Աստվածատես, Երար — բավական է, Թամաճ — կատարյալ, Թանգրիղովի — Աստուծո ծառա, Թուրբանտա — նորաճաս նուրար, Խուրլումելիք — (թաթարերեն) երջանիկ կամ օրջնյալ թագավոր։

13. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Բոլորովին նոր ժամանակի փոխառություններ են սրանք, որ առնված են ֆրանսերինց, իտալերենից և անգլերենից։ Գործածական էին բացառապես արևմտահայոց, հատկապես կաթոլիկ հայոց մեջ, ինչպես ժողեք կամ ձուզեփո (Հովսեփ), ձիվան (Հովհաննես — իտալական Ձիովաննի), Վալյանտին, Ալբերտ, Էդուարդ, Վիկտորիա, Էմեն, Վերժին, Ազոլի, Ռողոլիք և այլն և այլն, Սրանցից իտալական ձևերը արդեն անհետացան արևմտահայոց մեջ, իսկ մյուսները

շատ գործածական չեն այժմ, բացի իգական անուններից, որոնք արականներից ավելի սիրելի են դարձած, այն պատճառով, որ իգական անձնանունների մի ճոխ մթերք պակասում է արևմտահայոց մեջ։ Վերջին ժամանակներս Կովկաս էլ մուտք գործեցին և լրպատկան անունները, ինչպես էմմա, Էլեննորա (Կրօմատ՝ Նորա), Զուլետա, Օֆելյա, Վալենտինա, Էդուարդ, մինչև իսկ նապունն, Համլետ, Հենրի և այլն։

14. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Վերջին ժամանակներս զատ ոռուսական անունները սկսել են բազմանալ ոռուսահայ աշխարհում (Կովկաս և մանավանդ Ռուսաստան)։ Ռուսահայերից ոմանք ոռուսական համապատասխան մի անուն փնտրում գըտնում են իրենց վաղեմի անվան տեղ և այս ձևով էլ գործածում առհասարակ։ այսպիս նիկոլոսը զատնում է Նիկոլա, Գեորգը Գեորգի կամ Եգոր, Հովհաննեսը՝ Խվան, Գրիգորը՝ Գրիգորի և այլն։

Այս աշխատանքը այնքան է առաջ գնացած, որ բոլորովին անհամապատասխան անուններ էլ շատ անգամ լծորդվում են իրար պաշտոնապես, բավական է, որ երկու բառերի մեջ նմանահնչյուն մի տառ կամ մի ձայն գտնվի։ Այսպես՝ Մկրտիչը զառնում է

Նիկիտ, Հարուրյունը՝ Արտեմ կամ Արտյոմ, Սահակը՝ Սավա, Մարտիրոսը՝ Մարտին, Վաղարշակը՝ Վոլոդյա, Արշակը՝ Արկադիյ և այլն, որոնք իրար նետ ո՞չ մի առնչություն չունեն ամեններ։ Այս «արվեստի մեջ նշանավոր են հատկապես նոր-նախիչեանի հայերը։

Առանձնապես հարգի և սովորական են իրաղաջական անունները, ինչպես Միշա (Միքայել), Սաշա (Աղեքսանդր), Մաշա (Մարիամ), Թողյա, (Թեղողորոս), Լիզա (Եղիսաբեթ), Կոլյա (Նիկոլայոս), Կատյա (Կատարինե) և այլն։

Նոր ոռուսական անուններ են՝ Վլադիմիր, Օլգա, Օլյա, Օլինկա, Գույյա, Գունյա, Մարտինյա և այլն։

15. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՌԵԽՆԵՐ

Այս անվան տակ դատավորում եմ այն հայերեն անձնանունները, որոնք հայկական ազգային ինքնագիտակցության դարժնումից հետո սկսեցին գործածվել մեր մեջ, այն է վերջին 80-ամյակում։ Այս ազգային ինքնագիտակցությունը, որ մերժելով զուտ կրոնական և օտար անունները, պատմության էջերից գուրս բերեց գրեթե մոռացված հայ պատմական անունները և նրանք ընդհանուր գործածության դրեց, շրավականացավ միայն գրանցով և սկսեց ստեղծել հատուկ անուններ, բոլորն էլ զուտ հայերեն լեզվով և հայ ազգային գաղափարների շրջանակում։

Ահավասիկ այսպիսի նոր անունների մի փոքր ցանկ— Հայաստան, Արաքսի, Մասիս, Արտավատ, Արմենումի, Հայկումի, Ազատ, Սիրանուշ, Վարսանուշ, Հրանուշ, Հրագրան, Հրայր, Հրաշումի, Բերկրումի, Վշտիկ, Մարտիկ (ո՞չ թե Մարտիրոս բարից կրծատված, այլ հայերեն մարտիկ «կովող»), Հայկազն, Հայկարամ, Աղավնի, Արծվիկ, Հասմիկ, Քնարիկ, Արփենիկ, Ազճիկ, Սիրական, Լուսիկ, Լուսնբագ, Գեղումի, Ազատումի, Փայլակ և այլն։

Անունները կախում ունեն նաև տեղից ու հանգամանքից։ Հայության բոլոր հատվածները, թե՛ Հայաստանում և թե՛ գաղթավայրերում, միշտ մի միակ տիրապետության նպատակ չեն եղել և հետևաբար մի ազգեցության չեն ենթարկված։ Պահավական անունները կարող էին Հայաստանի արևելյան մասերում տարածված լինել, մինչ հունական անունները՝ ավելի արևմտյան մասերում, իսկ ասորական անունները՝ հարավային մասերում։ Տեղական զանազանությունը ավելի որոշ է ներկայում։ Կովկասի հայերը գործ են ածում ոռուական անուններ, որոնցից ո՞չ մեկը չի մտած արևմտյան Հայաստան և գաղութները։ Հունգարիայի, Լեհաստանի և Ռումինիայի հայերը ընականաբար ունեն հունգարական, լեհական և ռումինական անուններ, որոնք մեր մեջ իսպառ մուտք չեն գործած։

Հանգամանքներն էլ մեծ ազդեցություն ունեն անունների տարածման վրա—բարձր գասակարգը, իբրև նորության ու փալիքի սիրահար, սովորաբար հինն ու բնիկը շուտ է մոռանում, օտար անունները ավելի է սիրում և նրանց առաջին փոխառուն է, մինչդեռ հասարակ ժողովովով իր ունեցածին ավելի հավատարիմ է։ Պահավական անունները առաջին անգամ ազնվական դասակարգի մեջ մտան։ Թափավորները, իշխաններն ու նախարարները սիրում էին կոչվել Արշակունի ու Սասանյան արքայական տների անուններով։ Ասորական, երրայսական և հսմական անունները կրոնական դասակարգի մեջ մուտք գործեցին նախապես և նրա միջոցով տարածվեցին ժողովրդի մեջ։ Դրա համար է, որ երբ մեկը ընդունում է կրոնական կոչում, նրա աշխարհական անունը (մանավանդ եթե հեթանոսական է) հանում են և տեղը դնում կրոնական անուն, որ լինում է հոնական, իրայական կամ ասորական։ Այսպես՝ երբ Տրդատը թողեց արքայական գահը և ճգնավոր դարձավ, կոչվեց Հովհաննես։ Ծովինյանց Հեթում սպարապետը երբ թողեց սուրբ և վանք մտավ, կոչվեց Անտոն։ Այս սովորությունը շարունակվում է մինչև հիմա։ Հայ ազգային անունները գլխավորապես Կոստանդնուպոլսում հարվեցին և կամաց-կամաց գեղափի Արևելք տարածվեցին։ Երբ ես ծնվեցի (Կոստանդնուպոլիս, 1876 թ.) կարծեմ երկրորդն էի, որ Հրաշյա անունն ստացաւ։ Մինչդեռ այժմ Հրաշյա անունը սովորական է դարձել։ Եթե գնանք մի խոզ գուող, մեր լսած սովորական անունները պիտի լինեն երրայական, հունական և թյուրքական անունները։ Իսկ բուն հայկական, պահավական, եվրոպական, ոռուական և հայ ազգային անունները՝ հազիկ երբեք։ Մինչդեռ Կոստանդնուպոլիս, երևան և որիշ կրթված կենտրոններ (Թիֆլիս, Զմյուռնիա), առաջիններն արդեն անգործածական են դարձել և ավելի այս վերջինները գոյություն ունեն։

(Շարունակելի)